ւանդ էն անձն որ՝ ինչ պետութեան վերաբերեալ անցքի վերայ խօսում է, այն տեղ ծնած և այն տէրութեան հպատակն է, որովհետև նրա ասածները մեծ նշանակութիւն կունենան ընթերցողների և պատմաբանների աչքումը։ Հեշտ է ասել Ջ. Հանգիր խանը «մեծամեծ պաշտօններ է վարում», բայց ի՞նչ պաշտօններ, պ. յօդուածագիրը թ. ում է երևակայական պաշտօններ և բաց ի զինապետութիւնից՝ միւսներն անհիմն են. և էս վերջին պաշտօններն էլ ի սկզբանէ անտի՝ Իրանումը անանցատ են և միշտ էլ մէկ անձն է եղել էն պաշտօնները վարողն։

Ի՞նչ պատմաբան, ճանապարհորդ և յօդուածագիր ուզենայ այժմեան Պարսկաստանի զինուորական և քաղաքական պաշտօնների, աստիճանների կոչումները և պատուանունները համեմատելով Եւրոպականների հետ՝ կամենայ ճշտութեամբ սահման տալ նրանց, նա կսխալուի և չարաչար կսխալացնէ ընթերցողներին, որովհետև Իրանումը նոցա մասին դրական և դրաւոր սահմանուած օրէնք՝ կարգ և կանոններ չկան։

Ափսո՜ս որ Պ. Բաֆֆին երբէք Թէհրան չէ եղած, որ ականատես մուսուլմաններիցն անգամ մանրամասնաբար լսել էր Ջ. Հանգիր խանի շատ գեղեցիկ բարոյական յատկութիւնները (որովմանրանալ մեր նպատակիցն արտաքոյ է), մանաւանդ 1873 ամի Շահի բացակայութեան ժամանակին պատահած էն երևելի քաղաքական անցքը, որի մէջ Ջ. Հանգիր խանը զիւցազնական դեր խաղացողների հեղինակն և գլխաւորն էր, և իւր սուր հանաստեղծական ղրչովն էր նկարագրել, որպէս զի մեր գրականութեան մէջ յաւերժական ապացոյց և օրինակ էր մնացել այլ և այլ պետութիւնների մէջ ծառայող Հայերին։

Խօսքերնիս վերջացնելու ժամանակը մեր ամեն ասածները համառօտելով և նրանցից իրական հետևութիւն հանելով՝ բաւական համարենք ասել թէ, մեր ազգային պատմական հիւսուածների անաչառութիւնը, ճշմարտախօսութիւնը և անանձնականութիւնը (ինչպէս և արևմտեան գիտնականներն էլ ընդունած են) յատկանիշ և համարձակ ասում եմ, ազգային սեպհականութիւններ են, ուրեմն այժմ մեր դարումը չափազանց գովասանքներ շռայլել որ և իցէ մէկ Հայ — երևելի անձնաւորութեան ու մեր պատմութեան էջերը զմայլելի գոյներով լցնել, ոչ միայն կնսեմացնէք մեր անցեալները և նրա կենսագրութիւնը, որի վերայ խօսում ենք, այլ և ազգային ոգւոյ և բնաւորութեանը ևս ըստ ամենայնի ընդդէմ է։

ԳԱԼՈՒՍՏ ՇԻՐՄԱԶԱՆԵԱՆՑ.

Ի Թէֆլիս։

ՊԱՇՏՊԱՆՔ.

Խոքաքրո-Ընէան Աբարաք ամսագրոյ.

Հոգաբարձական Վարչութիւն երկուց սեռից Թեմական - Հոգևոր Դպրոցաց՝ առաքելով ընդ սմին զանուանական ցուցակ պաշտպան Անդամոց իւրոց, խոնարհաբար խնդրէ տպագրութեամբ յէջս Արարատ ամսագրոյ հրատարակել ի գիտութիւն ընդհանրութեան Ազգայնոց։

Աստրախանայ Հայոց երկուց սեռից Թեմական Հոգեւոր Դպրոցաց Հոդաբարձութիւնը քաղցր պարտաւորութիւն է համարում ի ցոյց շնորհակալութեան հրատարակել ի ներքոյ պաշտպան Անդամոց անուանքը, որոնք ներկայ տարուս ազգասիրական համակրութեամբ նպաստել են դրամաւոր նուիրատբութեամբ Ազգային բաղմակարօտ Դպրոցներին:

Անհաւասիկ անուանքը:

	Ռ.
Գալուստ Գ. Պարանովեանց մի դրամատոմսակ	100
Մոսկովարնակ Թադէոս Զ. Շամխարեանց	50
Օհան Գ. Ֆրանգուլեանց	10
Յովհաննէս Յ. Ֆրանգուլեանց	10
Սարգիս Մ. Բուրտեանց	10
Գէորգ Մ. Բարխուտարեանց	10
Մարգար Կ. Գոստինցեանց	10
Կատարինէ Յ. Ջանումեանց	10
Մարգարիտ Գ. Մատաքեանց	10
Մանուշակ Ս. Արգարեանց	10
Կատարինէ Գ. Թելէքեանց	10
Թագուհի Գ. Մեհրաբեանց	10
Եղիսաբէթ Ա. Ֆրանգուլեանց	10
Եղիսաբէթ Կ. Թելէքեանց	10
Կատարինէ Մ. Պօպովեանց	10
Ոսկի Կ. Մուղտուսեանց	10
Աննա Յ. Սուրարէկեանց	10
Եղիսաբէթ Զ. Պօպովեանց	10
Եղիսաբէթ Գ. Բուրտեանց	10
Մարիամ Պ. Բուրջալեանց	10
Ավսաննա Փ. Իվանովեանց	10
Եղիսաբէթ Յ. Իվանովեանց	10
Կատարինէ Յ. Կազաչկեանց	10
Եւայ Ս. Մատաքեանց	10
Կատարինէ Յ. Գոստինցեանց	10
	380

Վերոյիշեալ Պաշտպան Անդամոց Քուէն Տիկին Կատարինէ Յարութիւնեան Գոստինցեանց ազգասիրական հոգւով եւ մայրական խնամօք յանձն է առած եւ վճարում է դարձեալ տարեկան մի հարիւր քսան ռուբլի՝ ի սնունդ մի որբ աշակերտուհուայ՝ Սիրոյ Թաւրիզեանց, որը մնում է գիշերօթիկ եւ դպրոցական տանը վերակացուհի տիկնոջ հսկողութեան ներքոյ:

Հոդաբարձուք Յովսէփ Աւագ քահանայ Բունիաթեանց
Աղէքսանդր Ազամջանեանց
Բենիամին Մելիքեանց
Ղազարոս Էլեանց

Ի 15 Յունվար 1878 թ.
Համար 81
ՅԱՌՈՂՔԱՆ:

ԱԶԴ.

Այլ եւ այլ ծանր եւ ստիպողական պատճառներէ հարկադրուած, Արարատ ամսագրոյս Յունիս եւ Յուլիս ամսոց թիւերը այս անգամ ի միասին հրատարակուեցան, այնպէս եւ հետագայ Օգոստոս եւ Սեպտեմբեր ամսոց ամսաթերթից ի միասին հրատարակուելիքը այժմէն ազդելով ի տեղեկութիւն պատուելի Բաժանորդաց Արարատայ, նոցա ներողամտութիւնը կհայցեմք այսպիսի ակամայ տնօրինութեան համար:

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ: